

լիքն էլ իրանց քայլան ձիանով դուս էին եկել Տէրտէրանց կալը ջիլիթ էին խաղում ու իրանց շնորհքը տեսնում:

Քեռանցս կաղինդը շնհաւորելէն յետե գէշ-տան-գէշ իրկուայ զանգերու վաղգ տուն եկայ: Մերոնք էլ եկել թօփ էին եղել, չուկիք ընդունք էլ ընձէն յետե դնացել էին կաղինդ շնհաւորելու, որը քաւորանց տունը, որն էլ խնամոնց:

Նես մայ որ, մեր տնեցիք քուրսու չորս կողմը ջուրբուռել, նստել են, Վազգի մամիս գիրկը ընկայ ու ըսի.

—Մամի ջան, կաղինդը պրծանք:

—Չէ, բայա ջան, ըսաւ մամս, հլա մենծ բանը յետեն է:

—Էլ ի՞նչ կայ որ:

—Հլա տարին չենք կտրէ:

—Որման պտի կտրենք տարին:

—Սապր էրա, հմի կը տեսնես: Աղջի, Մագ-թաղ, տղամարդը քուլի օգէն է, ըսաւ մամս մենծ քուրոջս ու էլաւ հացի դօլաբէն հանեց էն մենծ բաղաջը, որին տարի էր ըսում, որ հըմա ըսեմ թէ մեր գուլթնի խարազանի պիճի թաքսի շափ կար, Գրկըրուաւ էդ տարին ու էլաւ ասն էր-թիկը, յիրեք պտուտ էրթէկի բոլորը պտըտցրաւ ու թըրփ, էրթըկէն ցած քցաւ տարին քուրսու վրայ: Ընտից յետե նես եկաւ, առաւ մենծ դա-նակը, յերեք հեղ խաշակնքեց տարու վրայ ու խաշմէրուկ կտրեց, չորս մենծ կտոր էրաւ ու հար-ցըրաւ. «Մեր տնեցիք քանի՞ հոգի են, կեցի, ութը աղբէր, մէկ էլ հալիւորը ինը, հմի տղայ թա-խուսը, մամս սկսաւ մատնելու վրայ համբել, Գրիգորս, Պետոս, Կարօն, Սաքօն, Խաչօն, Սենօն, Եղօն, Ալէքս, Արտաշս, Սահակը, էս տասը, ինն էլ, տասնինը, Էդ տղամարդու թախուսը, հըմի օղուշաղը, օխտը հարս, ես ութը, Աղջկներ, դի-մացըս կայնէք, ձեզ էլ համբելու տեսնեմ քանիս էք, Աղջկները սրով էկան մամիս դիմացը շարուան, Մամս էլի մատնելու վրայ սկսաւ համբել, Մագ-թաղը, Հեքօս, Էւան, Շուշանը, Սաթիկը, Նըխ-չունը, Հայիօն, Մարօն, Մաքօն, էս ինը, ութ էլ, տասնօխտը, Տղամարդը քանիս էր, տասնինը.— հա, տասնինը, տասնօխտն էլ որ գանք ըգուր վը-րայ՝ քանիս կենէ Ալէք ջան, հարցրաւ մամս ընձի:

—Անցի, կեցի մամի ջան, ըսի, հմի բաղմա-պատկեմ՝ կիմանամ: Չէ, էգիկ գումարումն է, պտի գումարեմ: տասնինը՝ տասնօխտն էլ, տաս-տաս . . . քսան . . . քսան . . . քսան . . . եռսուն, եռսուն . . . եռսուն վեց, եռսուն վեց հոգի կենէ մամի ջան:

—Հա, որ ըգման է՝ եռսունը վեց կտոր էլ պտի էնենք տարին, որ ամէն մէկին մէ կտոր հասնի:

—Ըրա չօրենքուն ու մշկներուն, հարցրի ես:

—Ընգոց էլ ըսգուր բաղալը ուրիշ բան կու-տամ, ըսաւ մամս, էսիկ մինակ մեր տնեցոց վրայ պտի փայ էնեմ, որ իմանանք թէ մեր տան դօլ-լաթը ո՞ւմ գլխուն է, շահանցը ո՞ւմ փայի մէջէն կէլնի, էս ըսաւ մամս ու տարին եռսունը վեց հաւսար կտոր էրաւ: Ինը կտորը դրաւ սինու վրէն, զրկեց օդէն, մնացածն էլ ամէն մէկիս մէ կտոր տուաւ:

Հըմի առել ենք ձեռներս մեր փայերն ու դո-ղըմ ենք, աջար որիս փայի մէջէն՝ պտի էլնի շա-հանցը, ու վախվրխելով ուտըմ ենք: Մէ մէլ տեսնեմ Եղօն ճուաց. «Ահա, շահանցը իմ փա-յիս մէջն է», Ըսելն իմացաւ Եղօն, էն սըհաթը թափանք խեղճի գլխուն, ինչդ որ լաշ ուտող գէշ զշերը ջամտըքի վրայ, քաշկըտըմ ու ըսըմ ենք. «Ո՛ւրա, ո՛ւրա, տեսնիք», Մամս էլ պուշ պուշ պագպըգըմ է Եղոյի ձեռներն ու թշները ու հետը ըսըմ: «Ո՛ւյ, Եղօ ջան, հոգուդ մեռնիմ, շահա-նցը քեզի էլաւ, մեր դօլլաթը՝ քու գլխուդ է ու քեզի պէս ջահէլ»:



Ն ի ի թ ի ի

ՈՒՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒ-ԹԵԱՆ:

Այլըջացնելով Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակների ցուցակի տեսութիւնը, իմացանք, որ բոլոր օրինակները բաժանուում են երկու խմբի, ուստի անհրաժեշտ է երկու խմբերի տարբեր ըն-թերցուածներն առաջ բերել, նախ քան տար-բերութիւններն յառաջ բերելը, հարկաւոր ենք համարում ընթերցողներին տալ մի շատ կա-րեւոր գրութիւն Աղուանից պատմութեան նախնական ձևի և խմբագրութեան վերաբերութեամբ, Գրու-թեան վերնագիրն է՝

—«Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն»:

Սոյն գրութիւնը հրատարակում ենք Մայր Աթոռոյս մատենադարանի համար 58 և 100 ձեռա-գրերից, որոնք նոր և սխալաշատ գրութիւններ են, առաջինը գրուած է Էջմիածնում 1767 թուակա-նին, ներսէս Հնորհալու ընդհանրական թղթերի

Հետո իսկ երկրորդը Պօլսումն անթուականն Անանիա վարդապետի հակաճառութեան թղթերի հետ, երկուսն էլ կրճատ պատուագրութեամբ և մանր նօտագրով արտագրութիւններ էին: 1

Համաձայն Սիւնեաց պատմիչ Ս. Օրբելեանի ասութեան՝ Անանիա կաթողիկոսը բաւական կարեւոր աշխատասիրութիւն է ունեցել, ժողովելով ի մի իրանից առաջ և իւր ժամանակուայ կարեւոր թղթերը, սոյն վերնագրով. «Գիր թղթոց կամ նամակ հաւատոյ»: 2) Այս գրութիւնը Անանիա կաթողիկոսի «Գիր թղթոց»-իցն է որ հրատարակում ենք, որից Սիւնեաց պատմիչը բաւական օգտուել է իւր պատմութիւնը գրելիս: Յանկալի կը լինէր Անանիայի «թղթոց»-ի ամբողջ օրինակը գրտնել: Թերեւս Պօլսումն երուսաղէմում կամ Մխիթարեանց Հայրերի վանքերում գտնուին: * Ըստ Օրբելեանի «Գիր թղթոց»-ը գործածութեան մէջ էր մինչև իւր ժամանակը—ժ.Գ. դարը: Գուցէ «Ընդհանրականը» և Մագիստրոսի թղթերը գործածութեան մէջ մտնելով բարձի թողի արած լինին «գիր թղթոց»ը, Մեր Մատենադարանի համար 58 և 100 ձեռագրերի միջի թղթերից մի մասը կարելի է «Գիր թղթոց»-ին վերագրել: Մինչև անգամ համար 100 ձեռագրի մի մասը «Գիր թղթոց»ի աղճատուած օրինակն եմ կարծում:

Անանիա կաթողիկոսը 949 թ. Խաչեան գաւառում:

— «Ես, Անանիա, շնորհիւն Աստուծոյ Հայոց Մեծաց Նուաստ պատրիարք» ևլն ևլն ևլն: 1

1. Սոյն գրութիւնը ի թիւս այլ գրութիւնների արտագրած ունէր հրատարակելու Մայր Աթոռոյ միաբան Գ. Տ. Մ., որ ամենայն յօժարութեամբ յանձնեց մեզ իւր արտագրածից եւ ծանօթութիւններից օգտուելու Աղուանից պատմութեան նկատմամբ, ուստի այս մասին խորին շնորհակալութիւն: Զանի որ սոյն գրութիւնը բաւական ընդարձակ գրութիւն է (մօտ 26 թերթ, ուստի ես միայն հրատարակում եմ վեց թերթի՝ այն կտորը որ լուսաբանում է Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան գործը. իսկ ամբողջը լիայոյս ենք, որ Գ. Տ. Մ. շուտով հրատարակել կըտայ, որով եւ Օրբելեան պատմագրի բաց թողածը կը լրացուի: Այս մասին տես Արարտ, 1894 թ., Հայկականք. 10: 1

2) Ս. Օրբելեան. Փարիզ, 1839, հատոր Բ երես 28. Մոսկւա, 1864, երես 208. • Եւ Լնքեալ զայս զմի իրանաց • մատանեալ ետուն ի ծես կաթողիկոսին զորս աւելորդ • համարեցաք գրել. զի կան լիով գրեալքն ի գիր թղթո • ցն, զոր ժողովեալ է սոյն Անանիա, որ հաւատոյ նամակ • անուանի: 1

* Այսպիսի ժողովածուի մի ընտիր եւ հաւանականօրէն լիակատար օրինակ տեսել եմ Կ. Պօլսի Անտօնեան Միաբանութեան մատենադարանում:

Կ. Վ.

— Եւ ապա՝ իրր ի խորոց սրտէ զայրագնեալ յիշեցաք զԲանն Տեառն առ աշակերտսն աւանդեալ, թէ հովիւ: 1) քաջ զանձն զնէ ի վերայ ոչխարաց, իսկ վարձկանն թողեալ զնա՝ ի բացուստ առնուցու նշմարել: 2) Եւ ժողովեալ դբազմութիւն սուրբ եպիսկոպոսաց և սուրբ հարանց և գիտնաւոր 3) վարդապետաց, որ էին յաշխարհիս մերում, դէմ եղեալ նոքօք գնացաք յաշխարհն Խաչենոյ՝ ընդառաջ եղև մեզ մեծ և փառաւոր, աստուածապահ և բարեպաշտ տէր Գրիգոր իշխան, հանդերձ սուրբ եպիսկոպոսօք և ճգնաւոր վանականօք և այլ անթիւ եկեղեցական կարգակցօք: Եւ սիրով ընկալեալ գոհանայր «զՏեառնէ, որ առաքեաց ի խնդիր կորուսելոցս զսուրբ Լուսաւորչի աթոռակալացդ, լուսաւորել զբազմամեայ 4) խաւարն և բառնալ զխոռվութիւն եկեղեցւոյ և միաբանել ի նոյն կարգ և ի կրօնըս և ի հաւատ սրբոյ Լուսաւորչին. զի որպէս էին հարք մեր, լիցուք և մեք մինչև ցլաւիտեան»: 1

Եւ նոյն ժամայն հրովարտակս գրէր յամենայն զխաւարս աշխարհին՝ առնուլ հրաման առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչեան գաւառի, Եւ ընկալեալ զհրամանս 5) իւրանման բնաւիցն, և ընկալեալ 6) նմանապէս հանդերձ այն՝ աւետաւոր հրատարակել ուր առ բոլոր սուրբ ուխտս, որ էին յաշխարհին Աղուանից, և ի հրամանէ Աստուծոյ առ ժամայն ժողովեալ բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ 7) գիտնական քահանայք, ըստ այնմ թէ ուր լուծումն մարմնոյ՝ անդ և արծուիք հաւաքին: 1) Ընդորս էր՝ Ա. Գագիկ կարծեալ կաթողիկոսն: 2)

Բ. Եւ Պետրոս՝ ի նմանէ ձեռնադրեալն էր Գարգմանայ եպիսկոպոս:

Գ. Եւ վանական էր որ յայնմ կողմանէ: 3) Հայր Գալիթ Փառխոսայ վանական.

Դ. Հայր Պետրոս՝ Կովստեղդի վանական.

Ե. Հայր Մանաճիհր՝ Երուսէփու: 4) Վանից վանական.

Զ. Հայր Գրիգորէս՝ Նորավանից վանական.

Է. Հայր Սիմէոն: 5) Խանդոնական վանից վանական.

Ը. Եւ Սամուէլ երէց 6) Սենեքերիմայ: 7) գրանքահայ.

Թ. Եւ Սուրբ Յովնապոլայ սուրբ Անանիանց քահանայ.

1) Բ. լուսանցքում: Թօյան, 10, 11: 2) Բ. Նշմարել եւ ժողովել: 3) Բ. գիտնական: 4) Բ. զբազմաճեա: 5) Բ. զհրամանց: 6) Բ. չեք. եւ ընկալեալ: 7) Բ. ալք:

4) Բ. լուս. — Զուլ, 17, 37: 2) Բ. կաթողիկոս: 3) Ուղղելու է. • Եւ վանականց էր որ յայնմ կողմանէ. • այսինքն Սենեքերիմ իշխանի բաժնից այն է՝ Գարգման Փառխոս եւն: 4) Բ. Երուսէփու: 5) Բ. Սիմէոն: 6) Բ. երեց: 7) Բ. Սենեքերիմա:

Եւ Գրիգոր իշխանի կողմանէն.

- Ա. Տէր Յովհաննէս՝ Աթախա(յ) եպիսկոպոս 1)
 Բ. Եւ տէր Յովհաննէս՝ Մաքենոցաց եպիսկոպոս,
 Գ. Հայր Միսայէլ՝ Հիկաքարի վանական.
 Դ. Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական.
 Ե. Հայր Մանուշակ՝ Խաչինայ 2) վանական.
 Զ. Հայր Պօղոս Խանդին վանից վանական.
 Է. Հայր Գէորգ՝ Ոսկէ վանից 3) վանական.
 Ը. Հայր Արտաւազգ՝ Այծաքարայ վանական.
 Թ. Եւ Սահակ քահանայ գիտնական, որ կոչի
 Գարրնորդի.
 Ժ. Եւ Աարդան քահանայ.
 ԺԱ. ԺԲ. ԺԳ. Տիրանուն և Պետրոս և Պօղոս՝
 զրան քահանայք.
 ԺԴ. Հայր Ստեփաննոս, որ կոչէր քերական.

Եւ այլ բազում զխաւորք, զորոց աւելորդ
 համարեցաք յիշատակել զանուանան, մի յագեցու-
 մըն բանիցն զպատերազմն արասցէ լսողացն, զբա-
 նաստեղծութեան զհանդէս:

Եւ բաժամաւար որդրեալ ընդ մեզ զաւուրս
 բազումս այլ և այլ մասամբ, զի էին ոմանք ի թիկ-
 նածութիւն հաւանեալ Գագկայ, իսկ ոմանք զմերն
 և զմեզ յօժարէին իրաւահարկ սիրով պատուագրել,
 Իսկ այլք ոչ զԳագիկ և ոչ զԵրանան, այլ այլոց
 ակն եղեալ՝ նշկահէին զերկոսեանն:

Իսկ իշխանն Գրիգոր աղաչէր, զի զԳագիկ
 երկրորդ անգամ ձեռնադրեալ 4) (Թողումք 5) նմա,
 օրինակ մեզ տալով օձ անհաւանութեան զարարեալ
 տեառն Գէորգայ հայոց կաթողիկոսի առ Յունան
 Աղուանից կաթողիկոսի ի ձեռն երանելոյ թագա-
 ւորին 6) Համամայ 7) բարեխօսութեան: Եւ իբրեւ
 ոչ գտանեաք հնարս ելիցն վճարման իրացն կատա-
 րել, և տեսեալ զանմիաբանութիւն ժողովոյն, ապա
 յաղօթն ապաւինեաք. քանզի զԵրանան յովովք ի
 ժողովոյն անարժան կարգային և զԳագիկ վարիւք
 արժանաւոր:

Իսկ զինչ ապա տարակուսիս այսորիկ ելս. զա-
 րտաւորն թողուլ չէ մարթ. և զի և հաւանէին
 իսկ ոչ: Զի յորժամ այն ինչ, որ յԱստուծոյ
 իցէ՝ անդ չիցէ ինչ, որ իցէ 8) ինչ ոչ ինչ չիցէ:
 Եւ զերկրորդ ձեռնադրութիւն տալով ուղղափա-
 ռին՝ ի սուրբ կանոնաց երկրբեան լուծման առնուաք
 հրաման, եւ ընդունել ոչ իշխեաք՝ յաղագս հրահո-
 սան և անբաւ սաստիկ նովոյցն, որ կարգեալ էր
 ի տանն Աղուանից յաղագս զառ ի նոցին եպիսկո-
 պոսացն ձեռնադրել 9) կաթողիկոսն ընդունել, զոր
 յայլում ժամու և պատճառն սասացուք:

Այլ մեր զնովմբ ածեալ զբանս, առ որ բանս
 է, զմիտս իրիս յարմարեցուք:

Ապա հարկեաք զԵրանան՝ առ ի մէջ ձեռ-
 նադրեալ և անարժան երեւեալ՝ լուծանել, և զԳա-
 գիկն՝ որ առանց Աստուծոյ էր կարգեալ և սուրբ
 կանոնաց՝ զնա և զայլս որք համեստագոյնք էին ի
 ժողովոյն ընդրեցաք, և առանձնացեալ զնեաք առա-
 ջի զկանոնական հրաման, արկանեաք զամօթ մարդ-
 կան, յիշեցուցանեաք 1) և զահ հանգերձեալ ա-
 տնինն, Իսկ նա իբր զգոնացեալ և զարթուցեալ ի
 քնոյ ասէր՝ մեղայ. և խոստովանէր լուել յայնմ հե-
 տէ ի կարգէ կարծեալ կաթողիկոսութեանն, եւ
 թէպէտեւ սիրտն բեկանէր և ի զջումն հատանէր,
 այլ սակայն առ սնոտի փառամոլութեանն 2) պա-
 տիւ(ի) սաղրելոյ չարասէր և կորստազմայլ գեհնա-
 ժառանգն Յակոբայ 3) զօխորդս չարութեանն և 4)
 զմահաչունչ գեղն ի սրտին գործարանի քողորդո-
 ւելի 5) Եւ սողարայիկ բանիւք աղաչէր զմեզ՝
 հանգերձ իշխանօքն՝ դառնալ մեզ յաշխարհն մեր
 առ անգամ մի, մինչ զի խուզեալ քննեսցին զիւրա-
 քանչիւր որ ի ներանձնաւորիցն, որ կարիցէ բառնալ
 զկարգն Աստուծոյ՝ զտեսչութիւն ժողովոյն՝ և ա-
 ռաքեսցին ըստ օրինին և ձեռնադրել ի սուրբն
 Գրիգոր, յիշխանութիւնն Տեառն Արասայ Հայոց
 Թագաւորի, որպէս և էր իսկզբանէ լեալ և կարգ-
 եալ 6) ի պատմութեանն Աղուանից, Իսկ մեք հա-
 ւանեաք առ ի նոցանէ ասելոյն, յանձն առնուաք
 դառնալ և խնդրեաք ի նոցանէ զպատմութիւնն Աղ-
 ուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա,
 թէ զինչ պատճառաւ Քանդի ոմանք այսր անդր
 արծարծէին ունել զլուսաւորութիւն անն Աղուանից
 նախագոյ լեալ քան զհայոցս 7) որ ի սուրբ լուսա-
 ւորէն Է և ի Ժ ամին 8) Տրդատայ Հայոց Թագա-
 ւորի, եւ ոչ ետուն մեզ տեսանել, քանզի ցուցա-
 նէր զտունն Աղուանից՝ արքեպիսկոպոս և զտունն
 Հայոց՝ պատրիարք, և զառ ինքեանս գիտելով զմասն
 խոնարհութեան՝ գրաւեալ գաղէին զպատմութիւնն 9)
 Աղուանից:

Իսկ որ ըմբռնէ զիմաստունս ի խորագիտու-
 թեան 10) ինքնին յայց ելեալ՝ արար մեզ իրաւունս
 քանդի եկին բերին յեղակարծս գրբունս 11) ինչ Յով-
 հանու Ոսկերբերանի 12) կարգաւով վասն զիշերոյն
 ժամու և իբրեւ ի հոգւոյն շնորհաց գոյ ասել զեղ-
 եալսն, թէ մերոյ աշխատութեանն պատճառս հան-

1) Բ. պակասում է Տ. 5. Ա. Ե. 2) ... Խաչինայ: 3) Բ.
 Ոսկեվանից: 4) ... ձեռնադրեալ: 5) ... ձեռնադրել: 6) ...
 թողուք: 7) Բ. թագաւորի: 8) ... Համամայ: 9) ... իցեն:
 10) Բ. ... ձեռնադրել:

1) Բ. իշեցուցանէ որ: 2) ... փառամոլութեան: 3) Բ.
 Յակոբ: 4) Բ. ... չարութեանն, եւ: 5) ... քողորդներ:
 6) Բ. ի կարգեալ: 7) Բ. հայոց: 8) Եօթն եւ տասն
 ամին: 9) Բ. զպատմութիւն: 10) Բ. լուս. 4. կտորն 5. 40.
 Եօթ. 3. 15: 11) ... գրկունս: 12) ... Ոսկերբերանի:

գրաստան տալով տեառն—գրեալ ի նա զպատճառս լուսաւորութեանն զոր սիրէաք, որում և ցանգորդն էաք տեսութեան:

Եւ կարգացեալ զպատճենն 1) վերասու եղեաք 2) շարամանութեանն, զոր սիրէաք, որ ունէր զայս ձեռքնակի, թէ... (Քանի որ Անանիա կաթուղիկոսի կոնդակի շարունակութիւնը քաղուածք է 949 թընուականին գոյութիւն ունցող Աղուանից պատմութեան գրքից, իսկ Օրբելեանն էլ քաղուածք է արեւ սոյն կոնդակի գրութիւնից, ուստի հարկաւոր համարեցի սիւնակների մէջ դէմ առ դէմ շարել նախ Աղուանից պատմութեան այն կտորները որ մտած է Անանիայի կոնդակի մէջ. երկրորդ բուն կոնդակի քաղուածքը Աղուանից պատմութիւնից, և երրորդ Օրբելեանի քաղուածքը յիշեալ կոնդակի պատմութիւնից, նախ քան սիւնակների միջոցով համեմատական գաղափար տալը, տեսնենք մինչև ցարդ յառաջ բերած կոնդակի մասից ինչպէս

է օգտուել Օրբելեանը. ահա Օրբելեանի պատմածը Անանիայի Աղուանից աշխարհը գնալու և այն տեղի անցքերի մասին):

— Եւ դէմ եղեալ երթալ յԱղուանս. 1) և հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գրիգոր և տարեալ իջուցանէ ի տան իւրում: Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին, որ Ագաթն 2) կոչի. դան և Գագիկ և Յովնան, Ապա խնդրէր 3) կաթուղիկոսն Անանիա զպատմութիւնն Աղուանից, զի գիտացեն զորպիսութիւնն Աղուանից Աթոռակալացն, և նքա թագուցեալ ամեննին ոչ ցուցանէին, Ապա ըստ վերին խնամոցն ի գիշերի պաշտամանն դնէ եկեղեցապանն Գանձասարու գիրք մի՝ որպէս թէ Յովհաննու Ռակեբերանի է, 4) և մեծաբնն զկաթուղիկոսն յընթեռնուլ, զոր և բացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւնն Աղուանից:

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն Տ Ա Խ Տ Ա Կ

ՊԼՏԻՆՔԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ Մ. ԿԵՂ. ԳԻՐԳ ԹՂԹՈՅ ԱՆԱՆԻԱՅԻ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ.

Ա.

— « Յետ առաքելոցն ») Բարդուղիմէոսի և Թադէոսի զինի ՄԿՕ (266) ամի. Ի. և ի Ժ. (17) ամին Տրդատայ Հայոց թագաւորի: և Ուռնայրի 2) Աղուանից թագաւորի ընծայի յաթոռ նոցին Առաքելոցն՝ Սուրբան Պահլաւ՝ Արշակունին, յազգէ Տէր սուրբ Գրիգորի 4) Լուսաւորչին Հայոց ի կռապաշտութեանն դեռ գոյով Տրդատայ և Ուռնայրի Հայոց և Աղուանից թագաւորաց:

Սոյն հատուածի մասին ոչ Աղուանից և ոչ էլ Սիւնեաց պատմիչները ոչինչ չեն յիշատակում: Աղուանից պատմութեան այն կտորները, որոնցից քաղուածքներ է արել Անանիա կաթուղիկոսը, համեմատութեան համար դէմ առ դէմ եմ դնում Աղուանից պատմութեան երկու խմբերի թէ տպագիր և թէ զրչագիր օրինակներից քաղուածքներ — իւրեանց տարբեր ընթերցուածներով հանգերձ միայն բնագիր ընդունելով ամէնից հին 21Ը (738=1289) թընուականի երկաթագիր օրինակը. իսկ մնացեալները տարբերութեանց համար թողնելով: Օրինակների համառօտադրութիւններն են՝ Ղ ունկիրանոս դպրի օրինակը=Ղ. Հահլաթունեանի օրինակը=Հ. Փարիզեան դպրագրութեան համար=Փ. Մոսկվայի=Մ. Երկրորդ խմբի բոլորագիր օր.=Բ. Նօտրագիր օր.=Ն.

1) ա. զպատճենն: 9) բ. եղաք: 2) Օրբելեան. Փաթիզ
Բ. հատոր երես 21. Մոսկվա երես 205.

1) Փաթիզեան տպ. Արդաթն: 2) Փաթ. խնդրէր ապա:
3) Մոսկ. չեք:

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ.

ԳԻՐԳ ԹՂԹՈՑ.

Բ. — «Յայնժամ» ազգեալ չարին ի միտս չար արքանեկացն, տարեալ ընկենուին զսորբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապին Արտաշատ քաղաքի. յորում զերեքտասան ամ¹ աւձախառն շնակեր վայրի. և ին և ին:

«Նորին իսկ Դեւքն զորս նուիրաւքն 3 և զոհիւքն⁴ մեծարէին, Իբրեւ ի վերայ թշնամեաց հասեալ տային 6 մոլեգնեալ⁵ և ուտել զիրեանց մարմինն, 8 այլ և ինորին թագաւորին զկերպարանս ի խողի դարձուցեալ զքնութիւն 9 յեղեգն 10 լինել փախստեալ:

«Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ զամենեանս ընդր, մինչև մնացին կորստեան կենաց աշխարհին:

«Մինչգեւ 11 յայսմ ահի և ի գողման կային ի մեծամեծաց մինչև ի փոքունս, 12 երեւեր ի տեսլեան զիշերոյ, հրեշտակ ողորմութեան Աստուծոյ, կնոջ ումմն Խորովիդուխտ անուն 13 քեւ Տրդատայ Հայոց արքայի:

«Անհնարին է ձեզ, ասէ ի հարուածոյդ¹ զերծանել, բայց եթէ 2 ի ձեռն սրբոյն Գրիգորի, երթեալ հանէք զնա ի խոր վիրապէն. և ին:

«Որոց ծուր եղեալ մեծին սրբոյն 3 Գրիգորի, արտասուաք խնդրէր յամենողորմն⁴ Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին:

«Եւ անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զբժշկութիւն մարմնական տանջանացն, ընդմին և զհոգւոյն⁵ լուսաւորութիւն. և ին:

«Եւ ոչ կացեալ իւր իսկ ունել զաթոռ քահանայապետութեան, հրեշտակ 6 Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս⁷ ասէ ցնա. Ոչ հետեւ 8 և համառեալ 9 առ խոնարհութեան կարգին, այլ յայսրմ քաջանալ և առնուլ կրկին զաննցական պատիւն որ վասն քահանայապետութեան շնորհի 10 Աստուծոյ, 11 և ին:

Այս հատուածը Աղուանից պատմիչը քաղուածք է արել Ագաթանգեղոսից, որի համար երկրորդ խումբը զանազանութեան է տուել: Որ է

«Որ ինչ սակա երիցս երանելոյն Գրիգորի Հայոց 1 ուսաւորչի պատմութիւն, Ագաթանգեղոս ուսուցէ: Իսկ զոր առ Աղուանս գործ ընդձեռն մանկանն Գրիգորի, գտանի յայսրմ մատենի:

«Վասն զի մեծին Գրգորի կամ էր¹ ոչ նստել յառաքելական յայն աթոռ,² հրեշտակ Աստուծոյ եկեալ առ նա, ասէ, ոչ հետեւ և արհամարհելով է յամառելիք ի խոնարհութեան կարգի, այլ քաջանալ և առնուլ զկրկնակի անանցականութեան պատիւն զոր վասն քահանայապետութեանն շնորհի 3 Աստուծոյ:

... Պատմ. աղ. խումբ. ա. գիւղ. ա. գլուխ ԺԴ (14):

1. Ղմ. ամս: 2. Ղ. օծախառն: Փմ. յօժախառն: 3. Մ. նուիրօց: Նփ. նուիրօցն: 4. Ղ. զօրիւքն: 5. Մ. պակասի իրօքն: 6. Մ. յանելու. տային նոցա: 7. Փմ. մոլեգնե: 8. Մ. մարմնս: 9. Փ. քնութիւն: Մ. ի քնութիւն: 10. Փմ. յեղեգն: 11. Մ. մինչեւ: 12. Ղմ. քփոցունս: 13. Ղ. յամուն: 14. Մ. հարուածոյդ: 2. Ղմ. քմ. եթէ: 3. Մ. պակասի սրբոյն: 4. Ղմ. յամողորմն: 5. Փ. զհոգւոյն: 6. Ղմ. հրեշտակ: 7. Փ. Գրիգոր: 8. Փ. հետեւ: 9. Ղմ. յամառել: 10. Փ. շնորհ: 11. Ղմ. յԱստուծոյ:

1. Ն. կամք: 2. Ն. յեթոռ:

Բ. — «Եւ այսահալած¹ արտասուօք ի խորս թիւնաւորացն յամենելով եռահնգեայ² ամովք աստանոր արտափայլեաց զԱսքանազեանս³ ազնի կռապաշտութեանց դիւցախաւար ձեն-ձերոց, անմահացեալ ի տանջանս և մահացուցեալ զիշխան աշխարհիս՝ զսատանայ և զկամարարս նորին, զարի և զմեծ հսկայն զդիւցազոհն Տրդատ Հայոց թագաւոր, անմաքրից զաղափարեալ կնձթակերպ խողիցն վարսիւք:

«Որով և կրկին ընկալեալ եղև շնորհ ի շնորհարաշին Վրիստոսէ ի ձեռն երազոցն Խոսրովիկխտոյ, ոչ այլ ազգ գտանել բուժել յախտիցն դիւաբախութեանց, թէ ոչ աղաւաղելոցն ի խորս թիւնաւորցն սրբոյն Գրիգորի ձեռամբ:

«Յաղաքս որոյ⁴ և զանյիշատակն ի թագաւորին խնամոցն պահեալ, փրկութիւն աղօթիւք նորին գործեաց⁵ թագաւորինս:

«Որոյ ելեալ¹ աղօթէր վասն նորին և բժշկեալ մկրտէր յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ:²

«Օր և անդանօր նորին երանելոյն Տրդատայ թագաւորին գերապատուեալ զնա խորաշքեղ զաւդիւք համգունակ Ահարոնի քահանայապետի, վակասակիր երկակի վեց աւկամբ³ շարառութեամբ, բերեալ զօրինակ ապագայիցն զքահանայապետին Գրիգորիսի, շնորհեալ պատիւ իւրոյ 1 ուսաւորչին:

14 շարանաւոր:

70. զ.

1. ա. պահալած: 2. ... եռահնգեաց: 3. ... զայսքնազեանս: 4. զայսք աշխատ: 5. ... որո: 6. ք. գործէ: 1. Բն. եկեալ: 2. ա. պակասի. սրբոյ: 3. ար. 2 աւկամբ: